



ՕՐԱԳԻՐ ԶՄԻՌՆԵՒԱՅ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ՔՄԱՆԵՐՈՐԴ ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ԶՄԻՌՆԵՒԱ ԸԱԲԱԹ 7 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1861

ԹԻՒ 659

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԶՄԻՌՆԵՒԱ, 7 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ

Իրուսիոյ թագաւորին Նաբոլէոն կայսեր հետ տեսութիւնը, որ մինչև ցայսօր կատարուած պիտի ըլլայ ի Բանդէյն քաղաքը, զանազան խորհրդածութեանց և քաղաքական մեկնութեաց պատճառ տուաւ Լաբուրիոյ օրագրութեանց:

Կերէի թէ Իրուսիոյ ժողովրդեան մէկ մեծ մասը սրբի հաճութեամբ չեն նկատեր այս տեսութիւնը: Բանդի կրօնէի թէ Վաղղիոյ կառավարութիւնը կու գէ համադրել զԻրուսիոյ թագաւորը, որ գաշակցու թիւն մի ընէ Վաղղիոյ հետ ի նպատակ ապագայ տիրապետական գիտաւորութեանց Նաբոլէոն կայսեր, խոտանալով իւր ոչնչութիւնը փոստ տիրապետութեան Բաբուրիոյ թագաւորին Վերմանիոյ վերայ:

Բայց յայտնի է որ այսպիսի գաշակցութիւն մի միաստակար հետեւութիւններ պիտի ունենայ Իրուսիոյ և Վեճին Իրիտանիոյ կառավարութեանց մէջ զանազան բարեկամական յարաբերութեանց նմանապէս միաստակար և հակառակ է միաւորութեան ազատութեան սկզբունքը, որ մտերմ մեծագէտ տարածուած են Բերմանիոյ ազգայն լուսաւորեալ մասին մէջ:

Այս օրինակով խորհրդածութիւնները ընելով, կրնամք հետեւեալ թէ յիշեալ գաշակցութիւնը անհիմն կարծիք մըն է. զոր քաղաքական կասկածոտ անձինք տարածեցին և լրագրութիւնները սկսան երկար ու զանազան մտածութիւններ ընել անոր վրայ:

Կըզրուցուի նաև թէ Նաբոլէոն կայսրը կու գէ այս օրինակ գաշակցութիւն մի ևս Հաւանտայի թագաւորին հետ ընել: Սակայն այս տեսութեան ամենին ձեռք չտար որ Վաղղիոյ կառավարութեանը հետ աւելուի. քանզի այն ատենը Հոլանտայի ներքին եղած Հնդկաստանի երկիրները մեծ փոփոխութիւն պիտի գտնուին: Ուստի այս խօսքը ևս անհիմն կարծիք մը կերէի մեզ, որ

տարածուեցաւ ի պատճառ այցելութեանը, զոր Հոլանտայի թագաւորն ևս մտաբեր, պիտի ընէ վեհափառ Նաբոլէոն կայսեր:

Հռոմէական խնդրոյն մօտաւոր լուծմանը վրայք բանախօսութիւններ կրկան միշտ ի մէջ Վաղղիոյ, Վաղղիոյ, Իտալիոյ և Հռոմի կառավարութեանց, բայց մինչև ցայսօր տակաւին հիմնաւոր յայտ մը չերկր այս գործոյն բարեկամութեան լինելուն: Իտալիոյ կառավարութիւնը շատ ընդարձակ ազատութիւններ կը շնորհէ սրբազան Վաղղիոյ փոստ գործադրութեան իւր հոգեւոր իշխանութեանը, եթէ կամաւ հրաժարի իւր աշխարհական իշխանութեանը:

Կըսուի նաև թէ, Վեճին Իրիտանիոյ կառավարութիւնը փափագելով կատարելապէս վախճան մը տալ իտալական խնդրոյն, բարեկամական առաջարկութիւններ րրած է Լաբուրիոյ կառավարութեանը որպէսզի Իտալիոյ տէրութեանը թողու զՎեճինի կողմէ արժանաւոր գնով մը, ի սէր ընդ հանուր խաղաղութեան աշխարհին:

Թէպէտև այսպիսի մարդասիրական առաջարկութեան և բանախօսութեան յաջող փոխանցը խիստ դժուար կերէի մեզ. սակայն տարակոյս չկայ թէ, զիտար և իցէ կերպիւ և ոչ զինի երկար ժամանակաց, Վեճինի կողմէ նաև Հռոմի մտացեալ նահանգները պիտի միաւորուին Իտալիոյ թագաւորութեանը հետ:

Նաբոլէոն նահանգները օրրոտօրէ կը մարբուին առաջակց գնդերէն և խռովայնոյ շնորհիւ: Բայց, չնորհել Իտալիոյ հզօր և բանիւրուն կառավարութեան: Ուստի յուսով է թէ քիչ ժամանակուան մէջ անդորրութիւնը և ապահովութիւնը կատարելապէս պիտի հաստատուին հարաւային Իտալիոյ մէջ, ինչպէս որ Հաստատուած են այս թերակղզւոյ միւս մասանց մէջ:

Մեր նախընթաց Վաղղիական Տեսութեանը մէջ յիշատակեցինք թէ Վաղղիոյ և Իտալիոյ կառավարութեանց մէջ ծանր տարածայնութիւն

մի պատահեցաւ ի պատճառ Վաղղիոյ մէջ գտնուած Նաբոլէոն հիւպատոսարանաց արձանագրութեանց՝ զորս Վաղղիոյ գահինը չուզեց, աւանդելու Իտալիոյ թագաւորութեանը հետ: Նին ձեռքը և կերէի թէ այս դժուարութիւնը կարգադրուելու վրայ է միջնորդութեան Վաղղիոյ կառավարութեան՝ որ առաջարկէր Վաղղիոյ տէրութեանը որպէսզի Վաղղիոյ գեւազանին յանձնուին յիշեալ արձանագրութիւնները. և Վաղղիոյ գեւազանն ևս Իտալիոյ գեւազանին ձեռքը աւանդէ զանոնք: Այս խաղաղասիրական առաջարկութիւնը սիրով ընդունուեց է, կը սեն, Վաղղիոյ կառավարութեանը:

Հռոմէն կը գրեն թէ սրբազան Վաղղի տոննախօսութիւն մի ըրէր է ի հանդիսի ամուսնութեան Նաբոլէոն նախորդ թագաւոր Վրանչիսկոս երկրորդին քրոջը ընդ եղբոր Վասկանայի նախորդ Վեճինի: Այս ատենախօսութեանը մէջ Նաբոլէոն Վրանչիսկոսը գործեալ քրոջեր է ընդգէմ եղելութեանց որ այս վերջին ժամանակները տեղի ունեցան Իտալիոյ մէջ: և ոստիկ գաղտնագրութեան է զքաղաքական ամուսնութեանը. որ շատնցմէ ի վեր ընդունուած է հռոմէական քաղաքակրթեալ շատ ազգերէ:

Այս բանին վրայք Նաբոլէոն Վեճին օրաքիրը հետեւեալ խորհրդածութիւնը կընէ:

«Չեմք գիտէր թէ ինչ հարկաւորութիւն կար, կրպէ, բանագրութեան այժմ զքաղաքական ամուսնութիւնը և այս կերպիւ յայտնի ընել բոլոր աշխարհի թէ անհնարին է որ հռոմէական վարդապետութիւնները միաբանին քաղաքական օրինադրութեանց հետ, որոնք ընդունուած են քաղաքակրթեալ երկիրներուն մէջ բնակող ամեն կաթոլիկներէն: Այս յարակից մը ընդգէմ լուսաւորեալ ժողովրդոց հարկաւոր սկզբանը, որ է կատարեալ բաժանումը եկեղեցւոյն ի տէրութիւնէ, այս յարձակումը կրնայ գործանք չպատճառէր մեզ: Այլ միայն կընշանակեմք զայն ի խորհրդածութիւն այնպիսի անձանց, որոնք տակաւին կը յամառին երկակայնեալ միա-

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ՈՒՂԵՐԶ ԸՆՈՐՀԱԿԱՆՈՒԹԵԱՆ

Ի գիւմաց հասարակութեան Հայոց Բնակարան

Առ պատուելի Տիկին Մարիամ Յակոբ Յարութիւնեան մատուցեալ նորին Տիկնութեան յերկրոյ իններորդի Յունիսի 1861:

Չէ այս պատշին անգամ՝ մեծարգոյ և ազգասէր Տիկին, զի հասարակութիւն Համազգեսցոյ աստ՝ մատչի խորին զգացմամբ յարգանաց և մեծարանաց առ Ձերդ արժանապատուութիւն ասեւ՝ զի շնորհակալ եմք զձեզ: Այս շնորհակալ իրաւամբ և ճշմարտեալ յազգաց բաղմամբ կը զործոց բարեբարութեան ձերոյ և ազգասիրութեան մարդասիրեալ ոչ միայն առ մեզ՝ առ մեծաւորս այսր, այլև առ հեռաւորս՝ համաշխարհիկ ձեր:

Անփառասէր և զխովին քրիստոնէական բնաւորութիւն ձեր՝ պիտեմք խուսի յայսպիսի հանդիսաւորութեանց մարդկային ճանաչման զարարս ձերոյ բարութեան, մինչ վիշտ ձեզ լինել ընդունելութեան հրապարակաւ գոհութեանց, եթէ և յայլմէ կողմանէ՝ չէր երկար և մտերիմ ծանոթութիւն ձեր հաւաստեալ զգալի և իրազեւտ արարեալ զձեզ՝ ի խնդրութիւն և ի պարծանս սրտից մերոց ամենեցուն՝ այնմ գեղեցիկ պարագայի եթէ քանի որդիականաւ խանդավառ չիմանալութեամբ սիրէ և մեծարէ զձեզ, առաքինազարդ և պատուարժան Տիկին, իւ-

րաբանչիւր որ ի համարէն խմբէ մերէ՝ ի փորձեանաւ հնդկամայ մանկաւոր՝ որ զառաջինն ուսանի զանուն ձեր ի ծնողէն հանդերձ ամենայն տպաւորութեամբ սիրելութեան և անհամարանէ մինչև ի ծերակոյնն ի մէջ: Այսպէս ծանուցեալ ձեր զմեզ, և յերաւի և յարժանի կոչեցեալ մեզ Վայր Հասարակաց, զիտար, թէպէտև պատկառելի ձերով պարկեշտութեամբ խոյս տալիք ի նուազիս յայտնի յընդունելութեան մայրաքաղաք յորդոց ձերոց զուղերն զայս անկեղծ երախտագիտութեան նոցա, զսիրտ և զմեծարանաց, զոր համակամ համալիր և համասիրտ բերմամբ դամբ խնդովին պատիւ անձին առնել մալուցյանքը ձեզ, հայրենասէր և ազգասէր Տիկին:

Բայց և այս ճշմարտութիւն է անփոփոխ զի՝ ըստ պարկեշտագոյն վարկանքէ բարեբարին զերային զործ բարեխաղութեան, առաւելագոյն զգայ բարեբարեալն զնորին շնորհաց երախտիս: Սակայն դուք զվարձս բարիս ի Տեսանէ ընկալելիք, յոր ապաւինեալ էք, զի ոչ խնդրէք զառ ի մարդկանէ զփառս և այնպիսեաց նմանիք արգարեւ ողորմածաց զորս՝ Փրկիչ մեր երանեաց օրհնեալ բերանով իւրով, և այն օրինակաւ կատարէք զողորմութիւն ձեր՝ զոր Նոյն պատուիրաց: Իսկ և ի տուեալն ձեզ ի հինգ քանքար շահեցուցեալ զայլ ևս հինգ մատուցելիք Տեսան, և ի նմանէ կոչեցիք «Ժառայ բարի հաւատարիմ»: Այդ եղեն միշտ ձեր գիտունք վարուց, և այդ լեցին ձեզ արժանիք և վարձք: Իսկ մեք ոչ կարեմք լռել և զանց իւրէ առնել ի բարոյելոյ

պշխարհի զչքնաղ և զգաղափարաւայել զործս ձեր՝ ընդ որ զարմացեալ հիասցին ամենեքին, և որք յիշելից նպատեալք ըստ ձեզ են ձեռնհաս ազգայինք՝ օրինակելի ձերում դուն զործիցեն հետեւել ի պայծառութիւն և ի բարօրութիւն Հայոց ազգի:

Անմատոյց ի մէջ ձերդ պահանքին անհամար զործք բարութեան և ձեռնտուութեան առ զոս կարօք առ ձերդ դիմեցին մարդասիրութիւն, թոյլ տուութիւն ժառանգութեան և եթ տալանքին զհաճութիւն ակնարկելոյ միայն ի վեհաճանական պարս ձեր հրապարակականս, որ անմիջապէս յապահովեն մեզ օգուտ յաւերժական, զորմէ լցեալ են սիրտք մեր խնդրութեամբ և զուարճութեամբ, ևս և անմաճ գոհութեամբ զբարեացապարհ համայն ժողովրդեանս զմեծարոյ Տիկնոջդ:

Իսկ զինեցէք մեզ եկեղեցի, և մեծագոյն մասին պիտոյից նորին բարեպաշտաբար հոգալարութեան և հոգայք միշտ: Իսկ առատաձեռն բերայք յաւետ ի հանգանակութիւնս արոյ և օգնականութեանց ամենայն մարդասիրական՝ քրիստոնէական և ազգասիրական առարկայից, և դուք նեցուկ ամուր հանդիսացայք յաջողման ամենայն ազգանպաստ առաջարկութեանց: Սակայն՝ որ կարեւորագոյն է ի պատուական և ի պիտանի մեծագործութեանց ձերոց, զի յապահովեցիք մեզ զլեզու, զազգութիւն և զհաւատս հարց մերոց՝ կառուցեալ մեզ Ուսումնարան որում հասարակութիւն մեր ի ցոյց երախտագիտութեան ետ անուն «Մանուկ և հարութիւնեան Ու-

բանութիւն կամ համաձայնութիւն մի . որ անկարելի է չի մէջ ազատութեւն և պատուութեան :

Աւստրիոյ նորահաստատ սահմանադրութիւնը իւր ամենայն զօրութեամբ կրմաբառի ընդգէմ ծանր դժուարութեանց , որ ամեն օր կրծագին 'ի կողմանէ զանազան ազգայնութեանց՝ յորոց բաղկացեալ է Աւստրիոյ տէրութիւնը :

Այս ազգայնութեանց մէջ շուրջաբերան իւր չափազանց հայրենասիրութեամբը , ամենէն աւելի ներգրութիւն կրպտածաւէ Աւստրիոյ կառավարութեանը , զանազան դժուարութիւններ յարուցանելով տէրութեան Սահմանադրութեւնը : Այս դժուարութիւնները ինչչվախճան պիտի ունենան . արդեօք բարեկամօրէն պիտի կարգադրուին թէ վերջապէս արիւնհահեղութեւն ևս առաւել պիտի շփոթուին : Այս հարցմանց պատասխանը ժամանակէն միայն սպասելու է :

Հետեւեալ նամակը Պադուիայէն յուղարկած էն մեզ 'ի հրատարակութիւն :

Բրավիա , 28 Յունիսի 1861 :

Արժանայարգ խմբագիր Արշալուստյ Արարական .

Գիտելով զի ցանկալի է ձեզ հաղորդել ընթերցողաց ձերոց գուրս արժանի ազգային օգտի , մանաւանդ եւ խնդակութեան , փութամ հաճութեամբ սրտի տալ ձեզ գլխաւոր ծանօթութիւն :

Արդեւ երեւեցաւ յեզս պատուական օրագրի ձերում անուն արժանայարգ տիկնոջ խմբի մերոյ՝ ձերունակարգ Տիկին Մարիամայ Յակոբ Յարութիւնեան հիմնարկողի Հայոց Ոստանարանի տեղադր : Եւ քեզիտ նախահոգ լեալ էր ազգասէր տիկինն ի կտակի իւրում յօգուտ հաստատութեանդ աշխրիկ , որպէս եւ սակս եկեղեցւոյն մերոյ , սակայն կամելով ի կենդանութեան իւրում իսկ՝ վկայել հաստատուն եւ յարատեւ դրութեան երկոցունց եւս , որոշեաց ի մտի գօրութիւն հրիտակաց իւրոց անձամբ անձին յարդիւնս ածել՝ բառնալով զայնս ի կտակէն : Սմին իրի գնեաց զկայուն կայունս ոմանս վասն հարիւր չորքերտասան հազար ոսկիեաց եւ յանուն ասացեալ Ոստանարանին , որ բերելոց են զբաւական արդիւնս յապանովել կամօք Տեառն զհիմնաւոր գոյութիւնն նորին : Նաեւ փոխեաց յանուն սրբոյ Յովհաննէս Էկեղեցւոյն մերոյ զկայունս ազգիր մեծագնի կրկնալարի տան իւրոյ , յորոյ ի շինութիւն ծախեցաւ ի սկզբան անդ՝ խմբ , յանէի քան զհարիւր հազար ոսկիիս , եւ քե քանի հաստանիմն եւս ամուռ կառուցաւ այն ըստ սովորութեան ազգի մերոյ , յաւելորդ է ասել : Նշանաւոր երեւի այս շինուած յԱրքունի կոչեցեալ դաշտին , որ ընտրելագոյն տեղի համարի աստ բնակութեանց պարոնաց , բարձրութեամբ իւրով քան զայլ շրջակայ շինուածս , որպէս եւ քան զնոսա ե գերազանց յարմա իւր եւ ի ճարտարութեան :

սուսնարան" , 'ի յաւերժական յիշատակ հանդուցեալք մեծահամբաւ Եղբոր ձերոյ աղա Գեորգիոյ Մանուկեան , և մեծապատիւ ամուսնոյդ աղա Զաւիթեայ Զարութիւնեան : Հաստատութիւն իմն յորոյ 'ի ձեռք միայն կարեմք յուսով զարգացին մանկունք մեր չորանալ զհարս իւրեանց և զհայրենիս , չառնել ապախտ զանունն՝ զոր կրենն , և չեղծանել ընդ վերջին շնչոյս մերում զգալով մեր և զհիւքեանս . . . : Աւել զի յորով անդամ այսպէս կալու թաղու Չախողակի և չարաշուք զհայ ժողովրդեան , ուր և տաւ ըտղրեցաւ նա հեռի 'ի հայրենեաց : Զձե՞ զի չէր անդ վարժարան ազգային ուսուցանել որդւոց նորա զոյգ ընդ զիտութեան սեփական լեզուին՝ և զպաւտիւ ծնողաց , զսէր և զհաւատարմութիւն ազգին և զհայրենեաց : Բարե՞ , և զինչ եղև յայնժամ . . . բարձան 'իսպառ և անհետ եղին և անուն նորա և յիշատակ և Եկեղեցւոյն մեկուսի և եթ ոչ հնարեաց զառաջս առնուլ շնչելոյ ազգութեան այնպիսոյ զազլեալ ժողովրդոյ , կամ աներկեան կայունսնել զիւր իսկ զոյութիւն . ոչ ևս առնել կարեցէ առանց զօրավիզն կալոյ նմա Ուսումնարան ազգային :

Բայց՝ 'ի մօտոյ զործք ձեր , աշխուշտք Տիկին , զոր աւուրբք յառաջ հանիք 'ի զլուս , և որ այժմ ընծայէ մեղ երջանիկ պատեհ միասնադամ 'ի մի հաւաքեալ մատչելոյ շնորհակալութեան սրտի առ ձերդ Աղնուութիւն , անցանէն այն ըստ չափ հիացման և մեծարանաց , անդուլականք են յիւրաւի և չնաշխարհիկ , և արժանի դարուց 'ի գարս արձանագրութեան

Արդարեւ արժանի գովեստի եւ արժանի օրինակելոյ է գործ պատուելի տիկնոջ , եւ երանի՝ քե ամենայն հասարակաց բարեբարոյք ըստ այսմ եղանակի տնօրինելին զայն մասն ի ստացուածոց իւրեանց զոր քողոյ կամիցին զկնի իւրեանց ի հրապարակական պարգէս : Մարք է եւ այնու դաշամբ կարգաւորել՝ զի յընթացս կենաց իւրեանց տակաւին վայելեցեն ի սովորական արդիւնսն , քեպետեւ փոխանցեալ ստացուածոց այն յիւրաւանց եւ յանուանեց նոցա :

Առաւելապէս ազգի մերում խորհրդական երեւի այսպիսի տնօրենութիւն , վասնզի չունիմք մեր գտնիական տնօրենութիւն որ խնամ տարցի ի գործադրութիւն եւ ի պահպանութիւն ազգային ստացուածոց , այնու սրտեռանդն փութով եւ հաւատարմութեամբ՝ որ յատուկ է իւրոյն Պետութեան ազգի ումեր . կամ որ նախանձախնդիր լիցի տեսանել զիջկատարելապէս եւ ամբողջապէս արդիւնաւորեցին զկնի մանու մերոյ անանդութիւնք մեր յազգային նպատակս :

Կամեցեալ հասարակութեան մերագանց աստ հանդիսապէս խոստովանել զնորմակալիս իւրեանց առ բարեացապարտ Տիկինն՝ ժողովեցան ի միասին այցելութեամբ ի բնակութիւնն նորա յերեկոյի միում եւ ընթերցեալ մատուցաւ Տիկնութեան նորա ի դիմաց հասարակութեան շնորհակալութեան ուղերձ մի , գորոյ օրինակն գաղթի ընդ այսմ կցորդեալ : (1)

Թեպէտեւ պարզ եւ անգարգ գրուած իմն էր ուղերձը , սակայն՝ իրաւի նկատեաց ընթերցողին՝ ուղիմ ոմն ի գողարիկ լաղացն (օրիորդ Մ. Գ. . Էան) զի չէր անդ եւ ոչ բառ մի գովութեան՝ աւելագանց , որպէս սովոր է երբեմն պատանի յայսպիսի գրաւոր նուերս . այլ զի վայելուչ էին եւ ճշմարիտ ամենայն բացայայտութիւնք նորին ուղեւալ առ Տիկինն :

Զկնի այնորիկ խօսեցաւ իւրով սովորական աշխուժիս եւ պերճ արտասանութեամբ տաղանդաւոր վարժապետն Ոստանարանի մերոյ պարոն Թովմատեան . գորոյ զբանս(2) ի դէպ վարկայ ի գիր արարեալ՝ առաւել յարգութեան ձերում ընդ բոլորս ընդ այսմիկ :

Ուրախ եւ գուարճ անցուցեալ մեր գերեկոյն , եւ վայելեալ ի քաղաքանիս եւ ի ստառցակազմ ըմպելիս (ստառց մեր գալ յԱմերեկոյ) հանդերձեալ ի ներկուս մատանց գաղղիացի խնամարարին , աւարտ տուաւ հանդիսին՝ կենաց քասիս վասն բարեբարոյնոյն ժողովրդեան , եւ դարձ արարաք ի տուն՝ շատացեալ ամենեցուն ի սրտի զի զայարտիս երախտագիտութեան լցուցաք միաբան սիրով եւ անկեղծ հաճութեամբ :

Ձեր խնամք ծառայ

Լ. Պ. Ը :

ԱԶԳԱՅԻՆ ԿԱՐԵՆՈՐ ԳՈՐԾ ՄԻ

“Բարաջանեան կամ հասարակ կոչմամբ Մարտիրոսեան տէր Ստէֆան Համանգացի , որ

(1)Տէն 'ի Բանասիրականն :

(2)Կրպորոյս յաջորդ քուովը պիտի հրատարակենք :

և ձեզ տանելոյ անթառամ բրաբիոնի :

Դուք՝ ըստ սկզբանց Տէրութեան ձայնին վարելով “Թէ քանի ժամանակս 'ի ձեռս ձերէ գործեցէք զբարիս” . իմաստաբար որոշեցիք ոչ թողուլ զհոգ և զկատարելութիւն առ 'ի ձէնջ յղացեալ և 'ի ձէնջ դիտաւորեալ կարեւորագոյն գործոց 'ի ձեռս այլոց , այլ ճշմարիտ բարեպաշտութեամբ և ազգասիրութեամբ վարեալ ցանկացայք այժմէն 'ի պատուական կենդանութեան ձերում տեսանել յարդիւնս ածեալ զոր ապաքէն հոգացեալ էր ձեր ըստ հասարակաց սովորութեան 'ի կտակի : Սմին իրի բարեհաճեցայք տալ փոխել յանուն և յազգայն սրբոյ Զովհաննէս Էկեղեցւոյն մերոյ աստ զկալուածագիր հոյակապ և մեծադին ապարանից ձերոց : Արդարեւ ազնուական և վայելուչ պարզ և տանն Աստուծոյ . պատարագ հաճելի Տեառն որ ոչ արհամարհէ , այնու զի մատուցանի այն “խոնարհ հոգւով և նը սրտի” :

Իստ սմին օրինակի և հաճեցայք բարեխնամ Տիկինն զնոյն իսկ կանուս և զերկարահալեաց տանել հոգ և զուսումնարանէն՝ զառ 'ի ձէնջ Տիկնութիւնը 'ի հաստատուն և 'ի յարատեւ պահպանութիւն նորին , վեհանախական նուիրմամբ երկուց թանկալին և նորա շէն մթերանոցաց , զորս գնեցիք յանուն և 'ի պէտս Մանուկ և Յարութիւնեան Ուսումնարանին , որոց գիրք անկեալ զմեծագետ անուանեալ տեղեւո 'ի յարմարութեւ վայրի , ուր են ամենայն երեւելի գործատուք վաճառականաց քաղաքիս , յայսհոյն հաստատութեանդ այգովի զբաւական արդիւնս վասն

Հնգհաստանի կալիւթա քաղաքը կրենակէր և այն տեղի երեւելի վաճառականներէն՝ մէկն էր . իւր կենդանութեան ժամանակը , 1794ին օրինաւոր կտակաւ թողուցեր է Նորնախիջնանի (1) Սահակեան և (2) Սարգիսեան Հայոց երկու գորտանց գրեթէ 100 հազար Ռուբլի արժողութեան անշարժ ստացուածք :

“Հայտնի է որ մէկ ուսուցիչ երկու շրջաններէ . ուստի 100 հազար Ռուբլին 10 հազար լիւս սթէրլին ըսել է : Այս գումարը անշուշտ փոքրիկ բան չէ . բայց և այնպէս մինչև ցայսօր , զժառանգաբար , հոգ չէ տարուեր յիշեալ կտակաւ թող տրուած անշարժ ստացուածքը , որ կալիւթա քաղաքը կրգտնութիւն , ձեռք բերելու յօգուտ Նորնախիջնանի գորտանոց” :

Ընդհանր 585 թուոյն մէջ , այսինքն 1858 թուոյն 28ին վերջիշեալ յօդուածը հրատարակելէնս ետեւ , այս կտակին օրինակը երկրորդ անգամ 'ի ըլստ ընծայելոյ 585 և 1886 թուոց մէջ : Իսկ առաջին հրատարակութիւնը լրագրոյս 1847 յունուարի 10 թուոյն մէջ ըրած էմք :

Այս նախնութեաց հաւելաւ որ տեղեկութիւն ներք տալէ ետեւ , արժան կհամարմք ծանուցանել թէ անցեալ շաբթու նամակ մի ընկաւ լրք կալիւթայէն օգոստոսի 8էն դրուած . որով մեր մեծարգոյ և ազգասէր բարեկամը հետեւեալ ազգօգուտ շուրջ կուտայ մեզ 'ի մասին այս կարեւոր գործոյն :

“Ի նորումս պարոն Սթեյլէ Նալանդեանց՝ որպէս ըսեմ պաշտօնատար Ռուսաց տէրութեան(1) , ժամանեալ է այսօրէն առ 'ի պահանջել զհին ժառանգութիւնն նորոյ Նախիջնանայ , զկտակաւ առանդեալ 'ի Սարտիւսի Ստէֆան և 'ի յայն ժառանգութիւնն է . զորմէ քաշնիցս զրեցի ձեզ և որ անունիմ աշողեցի 'ի ձեռս բերել . որով և մեր վստակք ունայն ոչ էղցին” :

— Իստորում հինցած և երեսի վերայ թող տրուած հրետակի վրայք կընտրմք , ոչ է անգէպ ապաքէն Իգմիրի հայազգի հասարակութեմիորք ձգեալ հանգուցեալ Լեւեան Գրիգոր ազգային կտակը . որով 7-800 հազար զուռուշ , պատրաստ դրամ , շնորհուած է Իգմիրի և Սալանդի գորտանոց և հիւանդանոցաց :

Տոսնեցորս տարի կայ , որ Տիկնութեան Լեւեան ազգասէր Գրիգոր ազան վախճանեցաւ 'ի թրեւտ . որ կրգտնուէր նաեւ իւր կտակեալ դրամ : Սակայն զանազան պարագայից պատճառաւ , յիշեալ գումարը ձեռք բարեկամ փոխալ

(1)Երբ չեմք սխալիր , պարոն Նալանդեանցն Ռուսաց պաշտօնատար է : Ծ . 4 .

աներկեան կալոյ նորին . և կամքն Աստուծոյ , հասարակագործելոյ ազգայնոցս զպտուղս և զարդասիւս ակնկալեալ լուսաւորութեան իւրոյ . և ս և երաշխաւորելոյ ամբողջութեան , և յուսամք հայրենասիրութեան հայկալն ժողովրդեան , մինչև կեցցին յերկրիս յայսմիկ պահպանեալք , որոց սերունդք օրհնեցեն յաւերժ զպատուեալ յիշատակ Սօրգ հասարակաց և զերեւանց Բարեբարի յազգաց յազգս և զարուց 'ի գարս ուր և իցեն :

Եթէ տուեալէ հոգւոյ արգարոց տեսանել զբարի արդիւնս սիրելեացն , զորս թողին յաշխարհի աստ քանի՝ հրճուանոք և ուրախութեամբ տեսցէ արդ 'ի խաղաղ կայանէ իւրմէ փարեւին ձեր Վրդ , նա՞ որ զկեանս ուղիւ Վրիտանիի կեցեալ հանդեալ 'ի զիրիս փրկչին իւրոյ , զի զոր միաբան ընդ իւր սկսեալն էիք զվերջին Աստուածահաճոյ և զազգօգուտ գործըս , փութոցայք այժմ 'ի լուս անդր հասուցանել 'ի կտար : Եւ յիշատակ նորա՝ յարգեալն 'ի մէնջ եղիցի՝ օրհնեալ . . . :

Իսկ ահաւաստիկ մեր՝ զուսմարելոցս և անձնուր սիրտ միացեալ միով զղացմամբ բերկրութեան և երախտաբարութեան առ ձեզ՝ արժանաւոր Տիկին , բարեմաղթեմք ձեզ 'ի փութեւ մինչև յերկրագոյնս զի կեցիք խնամով Բարձրելոյն ընդ յամայն ամս 'ի վայելս առողջութեան և երջանկութեան , յաւիտեան սիրեցեալ և մեծարեալ 'ի համազգի այս հասարակութեան մերմէ : Կեցցէ՛ Մարիամ . կեցցէ՛ ազգասէր Մարիամ :

գրեցաւ, ուր կրնայ իբրեւ աւանդ, ի ձեռք Ռուսաց կառավարութեան:

Եթէ Իզմիրի հայազգի երեւելաց մէջ միա բանութիւնը, դժբաղդութեամբ, աւրուած չըլլար, տարակոյս չունիմք թէ այս ստակը ձեռք բերելու օրինաւոր ծամբայ մը կըմտածուէր և գիւրին միջոց մը անշուշտ կրնար գտնուիլ:

Բայց որուն հոգն է ազգին ճշմարիտ օգտից վրայօք մտածել. բաւական է որ մեր անձնական կիրքը ու մեր մասնաւոր վրէժխնդրութիւնները յառաջ տանելու աշխատիմք և խռովութիւն պատճառ ըլլամք ընդ պատրուակաւ ազգասիրութեան և ճշմարտութեան . . .

ԵՅՅԵԼԻՈՒԹԻՒՆ

ՌՈՒՍԱՅ ԱՂԵՔԱՆԻՐ ԿԱՅՍԵՐ

Ի Խալիպեան Ուսումնարանն ազգիս Հայոց:

Ընթեալ ամսոյ 10ին Ռուսաց օգոստոսիան Ղեքսանդր կայսրը թէոգոսիայէն անցնելով, բարեհաճեցաւ իւր կայսերական այցելութիւնը պատուել զխալիպեան Ուսումնարանն, ուր Նորին Սեփաւորութիւնը անկաճական խորին յարգանքով և երախտագիտութեամբ ընդունուեցաւ ի գերապատիւ Սլավոնական տէր Վարդէի առաջնորդէն և խալիպեան մեծարգոյ Յարութիւն ազգային, որ ուսումնարանին հիմնադիրն է:

Օգոստոսիան կայսրը ու շաղկոթութեամբ պարտելով բոլոր ուսումնարանը և անոր վրայօք մանրամասն տեղեկութիւններ ստանալով, հաճեցաւ իւր բարձր գոհունակութիւնը յայտնելու տէր Վարդէի վարդապետին և խալիպեան Յարութիւն ազգային, որոց հետ մարդասիրաբար խօսակցեցաւ, շնորհակալ ըլլալով այսպիսի օգտակար հաստատութեան մը՝ մէկը հիմնադիր և միւսը դործակից ըլլալուն համար:

Կարին Սեփաւորութիւնը հաճեցաւ նաեւ պատուել զմեծարգոյ Սլավոնական (Յոհաննէս աղան զհաշակաւոր ծովանկար պատկերհանը, խօսակցելով անոր հետ նկարչութեան վերաբերեալ իւր աշխատասիրութեանց վրայօք: Սեր ջապէս օգոստոսիան Ղեքսանդր (Ներսիս) բարեհաճելով իւր կայսերական ստորագրութիւնը դնել Ուսումնարանին այցելուաց տեսարանին մէջ ի յիշատակ այս մեծ և մարդասիրական պատուոյն զոր հաճեցաւ ընելու խալիպեան ուսումնարանին, մեկնեցաւ կերպ երթալու, անպատմելի ուրախութեան մէջ ձգելով բոլոր թէոգոսիա քաղաքը և յատկապէս խալիպեան ուսումնարանը, որոնք գիշերը բազմաթիւ զանազան ճրագներով լուսաւորուեցան:

ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾՔ Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Բարձրագոյն Դրան բարեգութ հրամանացը համեմատ յանձնաժողով մը կազմուեցաւ, աշխատելու համար, որպէսզի եթէ կարելի է, երկպառակեալ երկու կուսակցութիւնները իւրարու հետ բարեկամօրէն համաձայնէ:

Այս յանձնաժողովը, որուն նախագահ անուանեցաւ վսեմափայլ Վապուրի էֆենտին, հետեւեալ մեծարգոյ անդամներէն կը բաղկանայ.

Յառաջադիմ կամ յուսադրեալ կոչուած կուսակցութեան.

Սրբազան Ղեկորդ արքեպիսկոպոս, նախորդ պատրիարք Կոստանդնուպոլսոյ.

Ստեփան-Պէյ Մարտիան,

Սրբազան աղա Սլավոնական,

Կաղապէս Էֆենտին:

Յետադիմ կամ խաւարեալ կոչուած կուսակցութեան.

Սրբազան Յակոբ արքեպիսկոպոս, նախորդ պատրիարք Կոստանդնուպոլսոյ,

Սիմէն աղա Մարտիանական,

Յակոբ աղա Սլավոնական,

Սիմէն աղա Սլավոնական:

Այս յանձնաժողովը մէկ երկու անգամ գումարուեցաւ. բայց զժողովութեամբ հաշտութիւն կամ համաձայնութիւն մի չկրցաւ ծագիլ անոր բարեւէր ջանքէն: Ստանդը լուսաւորեալ կոչուած կուսակցութիւնը կրպիգէ և կրպահանքէն որ նախ սրբազան Սարգիս Պատրիարքը իւր

պաշտօնէն հրաժարի, և ապա հաշտութիւն ըլլայ: Ընդգիմամբար կուսակցութիւնն ալ ամենեւին չուզէր զնշանիլ այս պահանջմանը:

Իսկէ որ երկու կողմն ալ իրենց պահանջմանցը վերայ հաստատուն կրման, և հակառակութեան ոգին իւր ամենայն զօրութեամբ, երկու կուսակցութեանց վերայ ալ տակաւին կրտիւնէ: Այս կերպիւ անհնարին է որ ցանկալի խաղաղութիւնը վերահաստատուի ազգին մէջ: Այլ ինչպէս որ մեր նախնիքս թուով զուգեցինք, փոխադարձ զիջումներ և եղբայրական փոխադարձ ներողամտութիւններ պէտք են: Վանդի այս հիմանց վերայ միայն կարելի է սէր և միաբանութիւն հաստատել, զերար սիրել և ազգասէր կոչուիլ: Իսկ եթէ մեր ընկերը, մեր ազգակիցը կատմեք, ինչպէս կարելի է որ զազգը սիրեմք և ազգասէր կոչուիմք: Եթէ մեր մեծերը, մեր գլխաւորները և մեր եկեղեցականները կանարգեմք, կընախատեմք թէ ազգային և թէ օտար լրագրութեանց միջոցաւ և զանոնք խաւարեալ և քգեալ կանուանեմք հրապարակաւ, եթէ փոխանակ կրքերը քրիստոնէաբար հանդարտեցնելու, զանոնք կրքագեմք ամեն կերպիւ և խոհեմութենէ բոլորովին կըհեռանամք, ինչպէս կրնամք մեք զմեզ խաւարեալ և քգեալ անուանել և ազգին օգտակար ըլլալ:

Այս ծամբով ազգասիրութիւն չըլլար, այս ծամբով՝ այսինքն երկպառակութիւնը հաստատուն պահելով, ազգը չկրնար յառաջադիմել, այլ ընդհակառակն օրտոտօք կըտկարանայ կըլքեալիմէ և վերջապէս կըկործանի:

Եթէ ամեն մարդ այս խորհրդածութիւնները անկողնապահութեամբ ընելու ըլլայ, եթէ իւրաքանչիւրը իւր խղճմտանաց խորը անգամ մի ինչ և անաշուտապէս քննէ զայն, յայտնի կըպիւր պիտի տեսնէ թէ այս երկպառակութեանց և այս խռովութեանց հիմը, ըստ մեծի մասին, անձնական կիրքն է. հակառակասիրութիւնն է, և ազգին ճշմարիտ օգտիցը վրայ հոգ տանողները սակաւթիւն են յայտ:

Իրաց այս ամենագիտելի մէջ, այն ինչ երկու կուսակցութիւններն ալ գրգռեալ յամառեալ և անողորմելի կրման, ճշմարիտ ազգասէրները ուրիշ բան չեն կրնար ընել, բայց միայն աղաչել զՍտուած որ իւր երկնային ուղորմութեամբ ազգին գլխէն հեռացնէ այն ամեն վնասակար և կործանիչ հետեւութիւնները, որ բնականապէս կըծագին միշտ ազգային այսպիսի ամենացաւալ երկպառակութենէ:

Կրտսեմք թէ քաղաքական ժողովը իւր հրաժեշտը տուեր է Բարձրագոյն Դրան, ի պատճառս հայրապետական կոնգակին զոր վեհափայլ տէր Ստամբուլի կաթողիկոսը յուղարկեր է ի Կոստանդնուպոլսոյ: Այս կոնգակաւ Կորին բարձր Սրբազանութիւնը կըբաղան սուրբ ժողովոյն կը յանձնէ, կըտես, որ սուրբ Կրտսեղ մի պատրիարք մի ընտրէ յիշեալ սուրբ Ստամբուլի միաբանից մէջէն, ըստ վաղեմի սովորութեան:

ՀԱՄԱՐԵԼԵՆԵՐ ՌՈՒՍԻՈՅ

Ընթեալ նախնիքս թուով մէջ այս նորահաստատ պատուական լրագրութեան վրայօք համառօտ յիշատակութիւն մը ըրինք:

Մեծան կըհամարիմք այսօր մեր ընթերցողաց աչաց առջև դնել հետեւեալ ազգային յօդուածը, որ յիշեալ լրագրութեան առաջին թուոյն մէջ հրատարակուած է:

«Համբաւաբերը այս վերջին ժամանակներում Ռուսիայի հայոց մէջ եղած գլխաւոր խօսակցութիւններն ու շաղկիւր լինելով, գտնուում է երբեք խնդիր, որոց վերայ համարեալ թէ ամենայն մարդ մտածում է և խօսում: Այդ խնդիրներն առաջինն է Պ. Կաթարեանցի առաջարկած մեր Եկեղեցու Ռեֆորմ երկրորդը՝ Տրիստիան Կաթարեան գաղափարը: Երկրորդը՝ Կորնախիլեանի մէջ անցած վերջին անցքերը: Այդ խնդիրներն առաջինը, թէ և սկզբունք մը ոչինչ համարուեցաւ և ըստ երեւութի մօտ էր վերջանալու (շնորհակալութիւն այն հերքմանց, որով մին քանի հարազատ Հայք

դուրս եկան ընթերցի առաջ և ստանիլ հարաձեցին նորան), բայց այնու ամենայնիւ կարծես թէ պիտի շարունակուի. միայն ոչ այն ծանապարհով, որով ընթերցում էր մինչև այժմ, այլ մին այլ ծանապարհով, որ աւելի զօրեղ է և հաստատուն: Պ. Զերբեղեանցը, որ յանձնէ առեւ աշխատութիւն զգուշացուցանելու իւր հայրենակիցներին օտարութեամբ վարդապետութիւնները, բաւական չհամարելով հերբելայանգակ ընթերցի առանձին յօդուածներով, որ յայտնի են ընթերցողներին, նամակ է գրած մեր վեհափառ Սրբազանատար Կաթողիկոսին և կանոնաւոր կերպով խնդիր լինածնի օրբազան Սիւնհոգոսին, որոց մէջ խնդրում է վեհափայլ ընթերցի հարկաւորութիւնը և կամ անհարկաւորութիւնը: Եթէ հարկաւոր է, ասում է նա, ընթերցի, եթէ հնացած և մաշված է մեր եկեղեցին, թող ուրեմն նորոգէ նորա կենդանութիւնը մեր հոգեւոր բարձրագոյն Ստեանը Ս. Սլավոնի, որ մեր ազգը ևս, որպէս ասում է Պ. Կաթարեանցը, խաւարից դուրս դալով միշտ տեսանէ, մի կենդանութիւն ստանայ, պատուաւոր անդամ լինի մարդկութեան և վերջապէս քննող և զննող քրիստոնէայ՝ աւետարանական վարդապետութիւնը հասկացող: Իսկ ընդհակառակն, եթէ առաջարկուած ընթերցի ոչ միայն հարկաւոր չէ, այլև սարսափելի և ազգակործան, թող սորա ևս վճիռ տան, որ ժողովրդի միտքը խաղաղուի և վերջանան այդ կործանական կռիւները և տարածայնութիւնը: որից մեր Ռուսիաբնակ ազգայինքը ազատ էին մինչև այժմ, և որ բայց ի վնասից՝ այլ բան չունին բերելու ազգի միութեանը: Արդիօք ընթացք ստանալու լինի այսուհետեւ այս դործը, լրագրիս պիտի ծանուցանէ ժամանակին:

Ներքորդ խնդիրը (Ներսիսեան գաղափարը կարգութիւնը) դեռ չէ յայտնի, թէ որպիսի ընթացք պէտք է ստանայ ապագայում: Բայց առաւելապէս յուրաքել է լուր. սրովհետեւ նոյն մէջ եղած վերջին անկարգութիւնները բարձունել են սրբազան Կաթողիկոսին խոհեմական տնօրէնութեամբը, և Տրիստիան հասարակութեան համաժողովը ճշմարիտ ազգասիրական գործունէութեամբ: Կորոցի կառավարութիւնը պէտք է լինի թէ եկեղեցականները և թէ աշխարհականները ընտրած պատուաւոր անձանց ձեռում, «միշտ ի խալիպեան կախման» ծայրագոյն Պատրիարքի և Կաթողիկոսի ամենայն Հայոց և Սիւնի Ս. Սլավոնի, և տեղական վիճակաւոր արքեպիսկոպոսի խնամածութեան ներքոյ»:

Վերջապէս՝ երրորդ խնդրի համար (Նորնախնիք անի մէջ անցած վերջին անցքերի), այս քանս միայն կարող ենք ասել, թէ խալիպեանը կարող էր ցանկալի բարեկարգութեամբ և բարեշինութեամբ պայծառանալ, եթէ նորա բնակիչների սրտումը չտրեւապետէր երկպառակութեան հոգին, որ սովոր է միշտ բաժանել ժողովուրդը երկու մասն՝ միմեանց հակառակ, միմեանց չարակամ: Քաղաքը, որի բնակիչները բոլորը Հայք են և նորա կառավարութիւնը նոցա սեփական ձեռում, կարող էր, մին հայկական մաքուր և անխառն, ճշմարիտ ազգային հաստորակութեան գաղափար ընծայել մեզ, մին օրինակ տալ այլ երկրներում բնակուած Հայերին, թէ որպէս կարող էր և պէտք էր լինել մին ժողովուրդ, մին հասարակութիւն, որ կառավարուում է ազգային հոգեւով, ազգային լուսաւորութեամբ, նա ևս ազգային օրէնքներով՝ մարդկութեան այժմեան պահանջմունքներին համաձայն: Այն բաղադրանքներն են այդ մտքերից խալիպեանի մերազնեայ բնակիչները և իւրեանց երկպառակութեամբ և քանի մի չարախտաւոր մարդկանց ցուցած ծանապարհը գնալով, պատճառում են զգալի ցաւ բոլոր ազգի սրտին:

Պերութեն սեպտեմբերի 26 ամսամիտով կըբերեն թէ անգործութիւնը և ապահովութիւնը օրըստօրէ ևս առաւել կըհաստատուին Մարտի մէջ վսեմափայլ Փոռատ փաշային, խոհեմ և գործունէայ հոգատարութեամբը:

Պերութի նաւահանգիստը եւ րոպացի պատե-
րազմական նաւեր շատ քիչ կան այժմ, և հի-
մալուան գտնուածներն ալ ձմեռը չհասած
պիտի մննին:

—Այն ժամայն սրբազնակատար տէր Սատմէն
կաթուղիկոսէն Հասած Հայրապետական կոնգալը՝
մասին ընտրութեան սուրբ Լըռուսաղէմի պատրիար-
քին, անցեալ կիրակի օրը մայրաքաղաքիս ամէն
կեղեցիները կարդացուեցաւ։

—Թրեսառու շոգենաւր, որ նինգշաբթի օրը կըսպասուէր, մինչեւ ցալսօր տակաւին չհապար :

Ուստի յուսամք քե հայկազուն հասարակութիւնը

Սպիտակ Թափայի Հռոմեայ:

Յաւ օրոք նից :

Զին վերք, խոց և քաղցկեղ :

ԿՍԿՈՒՄԸ ԶԿԱՅ Ե ԿԱՐԺՐԱԹԻՐՆՆԻ ՅՈՂԱՆՈՐԱԹԻՐՆՆՈ (ՕՐՆԱՐ ԵՒՐԻ) :

Տեղամեծսու թիւն :

Մորթացին հիւանդութիւնք

Խմբագիր-տեղ լրագրող :

[illegible]